

Մ Ա Ս II

Հ Հ Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Ե Վ Հ Ա Ր Կ Ա Բ Յ Ո Ւ Ջ Ե Տ Ա Յ Ի Ն Հ Ի Մ Ն Ա Կ Ա Ն Ց Ո Ւ Ց Ա Ն Ի Շ Ն Ե Ր Ի Կ Ա Ն Խ Ա Տ Ե Ս Ո Ւ Մ Ն Ե Ր Մ Ա Ս II - Ա

Վերջին տարիների սոցիալ-տնտեսական միտումները

Վերջին տարիները բնորոշվում են Հայաստանի Հանրապետությունում տնտեսության զարգացման եւ բնակչության կենսամակարդակի բարելավման հստակ միտումներով:

Մասնավորապես, սկսած 1994 թվականից հանրապետությունում արձանագրվել է անընդմեջ տնտեսական աճ՝ 1994-2007 թվականներին կազմելով միջինը՝ տարեկան 9.2 տոկոս: Հատկանշական է, որ 2004-2007 թվականներին տնտեսական աճը կազմել է երկնիշ թիվ: 2008 թվականին նույնպես սպասվում է ՀՆԱ-ի տարեկան իրական աճի բարձր տեմպ՝ 10.4 տոկոս:

2004-2007 թվականներին արձանագրված գնաճի ցուցանիշը միջինում պահպանվել է վերահսկելի շրջանակներում (2007 թվականին միջին տարեկան գնաճը կազմել է ընդամենը 4.4 տոկոս), սակայն տարեվերջին գրանցվել է գնաճի համեմատաբար բարձր մակարդակ 6.6 տոկոս: Պետք է նշել, որ վերջինս հիմնականում կրել է համաշխարհային շուկաներում պարենի եւ հումքային ապրանքների գների աճի ազդեցությունը:

2007 թվականին եւ 2008 թվականի առաջին յոթ ամիսների ընթացքում առավել ամրապնդվեցին վերջին տարիների դրական զարգացումները տնտեսական ակտիվությունը բնութագրող ցուցանիշների բնագավառում: Մասնավորապես, 2007 թվականի հունվար-հուլիսի համեմատությամբ 2008 թվականի հունվար-հուլիսին զբաղվածության մակարդակն (տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ) աճել է շուրջ 1.0 տոկոսային կետով: Ընդ որում, դա տեղի է ունեցել տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի 1.6 տոկոս աճի պայմաններում, զբաղվածների թվաքանակի 2.7 տոկոս ավելացմամբ:

Տնտեսական աճը զուգորդվել է աշխատավարձի բարձրացմամբ: 2008 թվականի հունվար-հուլիսին միջին ամսական անվանական աշխատավարձը 2007 թվականի հունվար-հուլիսին գրանցված ցուցանիշի նկատմամբ աճել է 20.4 տոկոսով: Բյուջետային եւ ոչ բյուջետային հատվածներում միջին աշխատավարձը համապատասխանաբար կազմել է 62253 եւ 108679 դրամ, իսկ միջին աշխատավարձը՝ 87908 դրամ:

Վերջին տարիներին բարելավվել են նաեւ աղքատությունը բնութագրող ցուցանիշները: 2006 թվականի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության¹ արդյունքներով 2006 թվականին աղքատության մակարդակը կազմել է 26.5 տոկոս՝ 2005 թվականի 29.8 տոկոսի դիմաց, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը 4.1 տոկոս՝ 2005 թվականի 4.6 տոկոսի դիմաց:

1 Այս պահի դրությամբ առկա վերջին պաշտոնական տվյալներ:


2006 թվականի Ջինիի գործակցի միջոցով գնահատված անհավասարության ցուցանիշները վկայում են, որ Հայաստանում բնակչության բեռնացումն ավելի խորն է ըստ եկամուտների ցուցանիշի՝ սպառման ցուցանիշի համեմատ: Այսպես, 2005 թվականի 0.257-ի համեմատ Ջինիի գործակցն ըստ սպառման 2006 թվականին կազմել է 0.263, իսկ ըստ եկամուտների կազմել է 0.369՝ 2005 թվականի 0.359-ի համեմատ:

Շարունակվում է պետության ֆինանսական կարողությունների ամրապնդման գործընթացը: Սկսած 2001 թվականից արձանագրվել են հարկային եկամուտների անընդմեջ աճ եւ դրան զուգահեռ՝ պետական բյուջեի դեֆիցիտ/ՀՆԱ-ի հարաբերության 3 տոկոսի սահմաններում պահպանման հստակ միտումներ:

Իրական հատված

2004-2007 թվականներին արձանագրվեցին համախառն ներքին արդյունքի բարձր աճի տեմպեր՝ միջինում տարեկան 13.6 տոկոս, որը բավականին բարձր ցուցանիշ է հետխորհրդային երկրների տնտեսությունների համար: Ընդ որում, վերջին 3 տարիներին, դրանց նախորդած տարիների համեմատ, տնտեսական աճի տեմպերը էլ ավելի արագացան: Այսպես, 2004-2007 թվականների միջին տարեկան աճի տեմպերը 1.0 տոկոսային կետով գերազանցում են դրանց նախորդած երեք տարիների տնտեսական աճի տեմպերը²:

Գծապատկեր 2.1. ԱՊՀ երկրներում եւ Հայաստանում հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 1989-2007 թվականներին




Հայաստանում տնտեսական զարգացումները ԱՊՀ անդամ մյուս երկրների համեմատությամբ առանձնահատուկ են նաեւ ՀՆԱ-ի խորհրդային մակարդակի նկատմամբ վերականգնման աստիճանի տեսանկյունից³: 1990–1993 թվականների շարունակական տնտեսական անկման արդյունքում 1993 թվականին ՀՆԱ-ի մակարդակը կազմեց 1989 թվականի մակարդակի ընդամենը 44.3 տոկոսը (անկումը կազմել է ավելի քան 55 տոկոս): Նույն ժամանակահատվածում ԱՊՀ երկրների միջինացված ՀՆԱ ցուցանիշը կազմել է 1989 թվականի 70.6 տոկոսը (անկումը կազմել է

² 2001-2004 թվականներին ՀՆԱ-ի միջին տարեկան աճը կազմել է 12.6 տոկոս:
³ Համեմատության համար հիմք է ընդունվել 1989 թվականը՝ խորհրդային Հայաստանի տնտեսական աճի վերջին տարին:

29.4 տոկոս): Չնայած այդ հանգամանքին, շնորհիվ հետագա տարիներին արձանագրված անհամեմատ բարձր տնտեսական աճի ցուցանիշների, Հայաստանում 2007 թվականին ՀՆԱ-ի մակարդակը կազմեց 1989 թվականի 147 տոկոսն այն դեպքում, երբ ԱՊՀ մյուս երկրներում այդ ցուցանիշը կազմել է ընդամենը 100.7 տոկոս: Սպասվում է, որ 2008 թվականին Հայաստանի իրական ՀՆԱ-ի մակարդակը կգերազանցի 1989 թվականի մակարդակը 162.2 տոկոսով:

Վերջին տարիների մակրոտնտեսական զարգացումների արդյունքում ՀՆԱ-ի կազմում տեղի ունեցան էական կառուցվածքային տեղաշարժեր: Մասնավորապես, շինարարության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2004 թվականի 15.5 տոկոսից 2007 թվականին հասել է 24.7 տոկոսի, արդյունաբերության տեսակարար կշիռը նվազել է 7.1 տոկոսային կետով, դառնալով 15.1 տոկոս, իսկ գյուղատնտեսության տեսակարար կշիռը 2004 թվականի 22.6 տոկոսից նվազել է եւ 2007 թվականին կազմել ՀՆԱ-ի 18.0 տոկոսը:

Գծապատկեր 2.2. Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքն րստ ավելացված արժեքների (2004-2008⁴ թվականների համար)



Տնտեսության զարգացման բարձր աճի տեմպերը շարունակվեցին նաեւ 2008 թվականին՝ հունվար-հուլիս ամիսներին արձանագրվել է 10.6 տոկոս տնտեսական աճ: Նշված ժամանակահատվածում տնտեսական աճի ապահովման գործում մեծ դեր են ունեցել շինարարության եւ ծառայությունների ոլորտները, որոնց հաշվին ապահովվել է տնտեսական աճի համապատասխանաբար 4.0 եւ 3.4 տոկոսային կետեր: Արդյունաբերությունը (ներառյալ էներգետիկան) 2008 թվականի հունվար-հուլիսին աճել է 2.2 տոկոսով եւ ապահովել 10.6 տոկոս տնտեսական աճի 0.4 տոկոսային կետը: Հաշվետու ժամանակահատվածում գյուղատնտեսության աճը կազմել է 7.0 տոկոս, իսկ տնտեսական աճին նպաստման չափը՝ 0.9 տոկոսային կետ:

2008 թվականի հունվար-հուլիս ամիսներին արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի ծավալների մոտ 1.8 տոկոս աճ՝ 2007 թվականի նույն ժամանակահատվածում արձանագրված 1.3 տոկոս աճի դիմաց: Աճը հիմնականում պայմանավորված է հանքագործական արդյունաբերության եւ էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի, գոլորշու արտադրության եւ բաշխման ծավալների համապատասխանաբար 5.8 եւ 5.7 տոկոս աճերով: Հանքարդյունաբերության ճյուղում

⁴ 2008 թվականի տվյալները ակնկալվող ցուցանիշներ են:


աճ է արձանագրվել, մասնավորապես՝ մետաղական հանքաքարերի արդյունահանման եւ հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերում, համապատասխանաբար՝ 5.1 եւ 18.4 տոկոսի չափով: Չնայած մշակող արդյունաբերության ոլորտում աճ չի արձանագրվել, սակայն նրա առանձին ենթաճյուղերում գրանցվել է աճ, մասնավորապես սննդամթերքների, ներառյալ՝ խմիչքների արտադրության, եւ այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության ճյուղերում արձանագրվել են համապատասխանաբար 5.3 եւ 16.8 տոկոս աճեր:

2008 թվականի հունվար-հուլիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ արձանագրվել է գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի 6.9 տոկոս աճ: Ընդ որում, գյուղատնտեսության աճը պայմանավորված է բուսաբուծության համախառն արտադրանքի 9.8 տոկոս աճով, իսկ անասնաբուծության համախառն արտադրանքի ինդեքսն աճել է 4.4 տոկոսով:

Շինարարության ճյուղի աճը վերջին երեք տարիներին կազմել է միջինում ավելի քան 28 տոկոս: Շինարարության ֆինանսավորման հիմնական աղբյուրներ են հաղիսացել բնակչության եւ կազմակերպությունների, պետական բյուջեի միջոցները: 2008 թվականի առաջին յոթ ամիսների ընթացքում իրականացված շինարարության ծավալները աճել են 14 տոկոսով: Բնակչության եւ կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալները կազմել են ընդհանուր իրականացված կապիտալ շինարարության համապատասխանաբար 70.8 եւ 19.4 տոկոսը: Շինարարության հիմնական ուղղությունները ընդգրկել են անշարժ գույքի հետ կապված գործառնությունների, ինչպես նաեւ տրանսպորտի եւ կապի ոլորտները, որոնց բաժին է ընկել ընդհանուր շինարարության 69.3 տոկոսը:

2002 թվականից սկսած ՀՆԱ-ի կառուցվածքում վերջնական սպառման ծախսերն ունեն նվազման միտում: 2007 թվականին դրանք կազմել են ՀՆԱ-ի 81.3 տոկոսը՝ 2004 թվականի 92.6 տոկոսի դիմաց: Վերջնական սպառման ծախսերի նվազմանը գուցա հեռ 2007 թվականին աճել են խնայողությունները եւ ներդրումները ՀՆԱ-ում: 2007 թվականին ներդրումները ՀՆԱ-ում կազմեցին մոտ 37.3 տոկոս, իսկ խնայողությունները՝ 32 տոկոս:

Գծապատկեր 2.3. Վերջնական սպառման, կապիտալ ներդրումների եւ ազգային խնայողությունների միտումները ՀՆԱ-ի նկատմամբ (2004-2008 թվականների համար)




Արտաքին հատված

2004-2007 թվականներին տնտեսության արտաքին հատվածին բնորոշ է ՀՀ առևտրային եւ ընթացիկ հաշվի հաշվեկշիռների (եւ դոլարային արտահայտությամբ, եւ ՀՆԱ-ում կշռով) վատթարացման միտումը: Դա պայմանավորված է արտահանման տեմպերի աճի կրճատմամբ եւ ներմուծման ծավալների ավելի արագ աճով: Վերջինիս աճին նպաստել է 2003 թվականի երրորդ եռամսյակից սկսած, անվանական փոխարժեքի արժեւորումը ինչպես նաեւ տնտեսությունում եկամուտների բարձր աճը: Բացասական միտումները որոշ չափով մեղմվել են եկամուտների եւ պաշտոնական տրանսֆերտների բարձր աճով (2004-2007 թթ միջին տարեկան փաստացի աճը կազմել է 24.9 տոկոս), ինչպես նաեւ տնտեսական աճի փաստացի գրանցված բարձր տեմպերով (միջին աճը 2003-2007թթ կազմել է 13.1 տոկոս): Արդյունքում, ընթացիկ հաշվի պակասուրդը (ՀՆԱ նկատմամբ) 2004-2007 թվականներին ունեցել է բացասական միտում՝ 2004 թվականի 0.55 տոկոսից (19.6 մլն ԱՄՆ դոլար) 2007 թվականին հասնելով 6.4 տոկոսի (589.3 մլն ԱՄՆ դոլար):

Արտաքին առևտրի աճի տեմպի արագացումը նկատվել է դեռ 2000 թվականից: 2000-2007 թվականներին արտահանման միջին տարեկան ծավալը 1999 թվականի համեմատ աճել է երեք անգամ եւ կազմել մոտ 730 մլն ԱՄՆ դոլար՝ հիմնականում պայմանավորված թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարերի, ինչպես նաեւ ոչ թանկարժեք մետաղների եւ դրանցից պատրաստված իրերի արտահանման մեծ ծավալներով: 2000-2007 թվականներին ներմուծման միջին տարեկան մակարդակը կազմել է 1383 մլն ԱՄՆ դոլար՝ 1999 թվականի համեմատ աճելով 92 տոկոսով: Արտաքին առևտրի բնականոն զարգացման եւ արտահանման խթանման քաղաքականության արդյունքում ներմուծման ծածկման մակարդակը 1999 թվականի 41.7 տոկոսից 2005 թվականին հասել է 66.7 տոկոսի, այնուհետեւ նվազելով՝ 2007 թվականին կազմել շուրջ 49 տոկոս⁵: Տնտեսության արտաքին բացվածությունը⁶ 2007 թվականին կազմել է մոտ 58.3 տոկոս նախորդ երեք տարիների միջինում 70.4 տոկոսի դիմաց:

Գծապատկեր 2.4. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրաշրջանառությունը (2004-2007 թվականների փաստացի եւ 2008 թվականի սպասում)



⁵ 2007 թվականի ապրանքների եւ ծառայությունների ներմուծման 41.5 տոկոս աճն աննախադեպ էր:

⁶ Հաշվարկված որպես ՀՆԱ-ի նկատմամբ ապրանքների եւ ծառայությունների շրջանառության հարաբերակցություն:

Վերջին տարիների կապիտալի մեծ ներհոսքերը, չնայած ընթացիկ հաշվի վատթարացմանը, հանգեցրել են Կենտրոնական բանկի պահուստների հետագա կուտակման: Պաշտոնական պահուստային ակտիվները 2007 թվականին ավելացել են 587.1 մլն ԱՄՆ դոլարով, տարեվերջին կազմելով 1659.2 մլն ԱՄՆ դոլար եւ ապահովելով ներմուծման 5.5 ամսյա ծածկույթ: Օտարերկրյա ուղղակի ներդրումները 2007 թվականի վերջի դրությամբ կազմել են 2485.8 մլն ԱՄՆ դոլար՝ տարվա ընթացքում ավելանալով 711.4 մլն ԱՄՆ դոլարով եւ 2.4 անգամ գերազանցելով 2004 թվականի մակարդակը:

Վերջին տարիներին հատկանշական ձեռքբերումներից է պետական բյուջեի դեֆիցիտի մակարդակի իջեցմանը զուգահեռ պետական պարտքի մակարդակի կրճատումը: Նախորդ երեք տարիների միջինում 24.8 տոկոսի դիմաց արտաքին պետական պարտքը 2007 թվականին կազմել է ՀՆԱ-ի 15.7 տոկոսը:

2008 թվականին ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության աճի միտումը շարունակվում է, ընթացիկ տարվա յոթ ամիսներին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ այն ավելացել է 29.5 տոկոսով եւ կազմել 2920.2 մլն ԱՄՆ դոլար: Ապրանքների արտահանումը 2008 թվականի հունվար-հուլիսին կազմել է մոտ 628.1 մլն ԱՄՆ դոլար: Նախորդ տարվա յոթ ամիսների նկատմամբ արձանագրվել է ապրանքների արտահանման 0.2 տոկոս անկում: Արտահանման ապրանքային կառուցվածքից բացառելով «թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ եւ դրանցից իրեր» ապրանքախմբի մասնակցությունը, արտահանման աճը 2008 թվականի յոթ ամիսներին կկազմեր 3.4 տոկոս: Միեւնույն ժամանակ տեղի է ունեցել հանքահումքային արտադրանքի եւ ոչ թանկարժեք մետաղների եւ դրանցից իրերի արտահանման աճ:

Ներմուծումը 2008 թվականի յոթ ամիսների տվյալներով կազմել է 2292.1 մլն ԱՄՆ դոլար եւ նախորդ տարվա յոթ ամիսների նկատմամբ աճել 40.9 տոկոսով⁷: Ներմուծման բարձր աճը պայմանավորված է բնակչության եկամուտների աճով եւ փոխարժեքի արժեւորմամբ պայմանավորված ներմուծման նկատմամբ բարձր պահանջարկով, ինչի արդյունքում աճ է նկատվել ներմուծման գրեթե բոլոր ապրանքախմբերում: Ընդ որում, աճին նպաստել է նաեւ ներդրումային բնույթ ունեցող ապրանքների ներմուծումը. ընդհանուր ներմուծման մեջ մոտ 19 տոկոս կշիռ ունեցող «Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ», «Սարքեր եւ ապարատներ» եւ «Տարբեր արդյունաբերական ապրանքներ» ընդգրկող խմբերի աճը 10.4 տոկոսային կետով նպաստել է ներմուծման աճին:

Արտահանման իրական անկումը՝ դրամային արտահայտությամբ 2008 թվականի հունվար-հուլիսին կազմել է 13 տոկոս: Իրական ներմուծումը նույն ժամանակահատվածում աճել է 13.6 տոկոսով՝ հիմնականում արտագույլով սպառողական երկարատեւ օգտագործման ապրանքների (հատկապես ավտոմեքենաների) եւ կապիտալ ապրանքների մեծ պահանջարկը:

Տնտեսություն իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների հոսքերի ծավալը⁸ 2008 թվականի առաջին վեց ամիսներին կազմել է մոտ 515.1 մլն ԱՄՆ դոլար եւ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 65 տոկոսով: Հունվար-հունիս ամիսներին իրականացված շուրջ 352.7 մլն ԱՄՆ դոլարի օտարերկրյա ուղղակի ներդրումների 62.9 տոկոսը

⁷ Առանց «թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ եւ դրանցից իրեր» ապրանքախմբի, ներմուծումը ավելացել է 40.2 տոկոսով:

⁸ Առանց պետական կառավարման եւ բանկային համակարգով ստացված վարկերի:

ուղղվել է էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի եւ գոլորշու արտադրությանն եւ բաշխմանը, 10.2 տոկոսը՝ կապի, 7.1 տոկոսը՝ օդային տրանսպորտի գործունեությանը:

2008 թվականի յոթ ամիսների արտաքին ապրանքաշրջանառության 30.5 տոկոսը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին, իսկ 37.9 տոկոսը՝ Եվրամիության 27 երկրներին: ՀՀ խոշոր առևտրային գործընկերներն են՝ Գերմանիան (8.7 տոկոս), Չինաստանը (6.3 տոկոս), ԱՄՆ-ը (4.1 տոկոս), Թուրքիան (4.1 տոկոս) եւ Բելգիան (4.0 տոկոս), իսկ ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանը (14.5 տոկոս), Ուկրաինան (6.8 տոկոս), Ղազախստանը (5.1 տոկոս) եւ Վրաստանը (2.5 տոկոս), որոնց բաժին է ընկնում ԱՊՀ երկրների հետ ապրանքաշրջանառության շուրջ 95 տոկոսը: Առևտրային հաշվեկշիռը դրական է Նիդեռլանդների, Վրաստանի, Մեծ Բրիտանիայի եւ Լյուքսեմբուրգի հետ, համապատասխանաբար՝ 74.3, 22.8, 2.3 եւ 0.7 մլն ԱՄՆ դոլարի չափով:

Փոխարժեք

2008 թվականին, ըստ էության, դադարել են նախորդ տարիներին ձեռնարկված փոխարժեքի կտրուկ արժեւորման միտումները: Մասնավորապես, եթե ընթացիկ տարվա հունվար ամսին դրամ - ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը կազմել է 306.83 ՀՀ դրամ, ապա հունվար-հուլիսին այն մնացել է գրեթե անփոփոխ եւ կազմել 306.84 դրամ՝ թեւ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գրանցվել է դրամի 13.3 տոկոս արժեւորում (2007 թվականի յոթ ամիսներին՝ 19.5 տոկոս արժեւորում): Իրական արդյունավետ փոխարժեքի⁹ միջին արժեւորումը 2008 թվականի յոթ ամիսներին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ կազմել է 6.3 տոկոս՝ ամբողջությամբ պայմանավորված անվանական արդյունավետ փոխարժեքի արժեւորմամբ:

Դրամավարկային հատված

Չնայած 2008 թվականին տեղի ունեցած գնաճային ճնշումների ուժեղացմանը, ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագրով 2008 թվականի գնաճի նպատակային ցուցանիշը մնացել է անփոփոխ՝ 4 տոկոս (+/-1.5 տոկոս միջակայքով):

2008 թվականի օգոստոսի վերջի դրությամբ փողի բազան կազմել է 445.1 մլրդ դրամ՝ տարեսկզբի նկատմամբ աճելով 4.2 տոկոսով: Նույն ժամանակահատվածում ԿԲ-ից դուրս կանխիկը աճել է 4.0 տոկոսով, կազմելով 364.4 մլրդ դրամ, արդյունքում կանխիկի տեսակարար կշիռը փողի բազայում կազմել է 81.9 տոկոս:

2008 թվականի օգոստոսին 2007 թվականի դեկտեմբերի համեմատ փողի զանգվածն աճելով 9.9 տոկոսով կազմել է 760.2 մլն դրամ, ընդ որում դրամային եւ արտարժույթով ավանդների հաշվին ապահովվել է աճի համապատասխանաբար 9.3 եւ 6.7 տոկոսային կետը: Բանկային համակարգից դուրս կանխիկը դրամական զանգվածի աճին նպաստել է 5.4 տոկոսային կետով:

Տնտեսության վարկավորումը 2008 թվականի օգոստոս ամսին 2007 թվականի դեկտեմբերի համեմատ աճել է 40.4 տոկոսով՝ կազմելով 600.0 մլրդ դրամ: Ընդ որում արտարժույթով վարկերը

⁹ Արդյունավետ փոխարժեքը ցույց է տալիս ազգային արժույթի փոխարժեքի միջինացված շարժընթացը ոչ թե մեկ, այլ մի քանի, հանրապետության համար ավելի կարեւոր արժույթներից բաղկացած «զամբյուղի» նկատմամբ: Իրական արդյունավետ փոխարժեքի ինդեքսը հանդիսանում է այն հիմնական ցուցանիշը, որն բնութագրում է հիմնական արժույթների միավորված շարժընթացն ու շարժման ուղղությունը եւ կարող է հիմք հանդիսանալ վերջիններիս զարգացման տեղեկանքների կողմնորոշիչ հետետություններ անելու համար: Բացի դրանից այն հիմնական ցուցանիշն է, որն բնութագրում է երկրի մրցունակությունը միջազգային շուկայում: Իրական արդյունավետ փոխարժեքը ցույց է տալիս մեր եւ գործընկեր երկրների միջեւ հարաբերական գների վարքագիծը՝ բերված մեկ արժույթի:

նույն ժամանակահատվածում աճել են 33.9 տոկոսով՝ կազմելով 224.6 մլրդ դրամ (2007թ. դեկտեմբեր՝ 167.7 մլն դրամ), իսկ դրամային վարկերը աճելով 43.3 տոկոս՝ կազմել են 373.5 մլրդ դրամ (2007թ. դեկտեմբեր՝ 260.0 մլն դրամ):

2008 թվականի օգոստոս ամսին ՀՀ պետական (շուկայական) պարտատոմսերի շուկայում նկատվել է տոկոսադրույքների աճ: Այսպես, եթե 2007 թվականի հունվար-օգոստոս ամիսների ընթացքում տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին եկամտաբերությունը կազմել է 6.6 տոկոս, ապա 2008 թվականի նույն ժամանակահատվածում այն կազմել է 9.14 տոկոս: 2008 թվականի օգոստոս ամսին տեղաբաշխված պետական արժեթղթերի ծավալը կազմել է 36.1 մլրդ դրամ: Հաշվետու ժամանակահատվածում տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին ժամկետայնությունը կազմել է 2998 օր՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 1730 օրով, ինչը պայմանավորված է հիմնականում երկարաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխմամբ: Տոկոսադրույքների աճին նպաստել է նաև ՀՀ ԿԲ-ի կողմից ռեպո տոկոսադրույքի բարձրացումը, 2008 թվականի օգոստոսի վերջին կազմել է 7.75 տոկոս՝ 2007 թվականի դեկտեմբերի 5.75 տոկոսի դիմաց:

2008 թվականի օգոստոս ամսին պետական (շուկայական) պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը գերազանցել է թողարկման ցուցանիշը 0.8 անգամ, իսկ տեղաբաշխում/թողարկում հարաբերակցության միջին մեծությունը կազմել է 0.7:

Աղյուսակ 2.1. Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները 2008 թվականի հունվար-օգոստոս ամիսներին

Ամիսներ	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս
Առևտրային բանկերի վարկեր	17.17	16.45	17.17	17.29	17.39	17.35	16.80	17.2 ¹⁰
Առևտրային բանկերի ավանդներ	6.51	6.16	7.36	6.14	5.71	5.75	6.23	6.9 ¹¹
ՀՀ ԿԲ ռեպո տոկոսադրույքներ	5.75	6.0	6.25	6.50	6.75	7.0	7.25	7.75

Հարկաբյուջետային հատված


2004-2007 թվականներին հարկաբյուջետային հատվածի ցուցանիշները բացարձակ մեծությամբ զգալիորեն աճել են, սակայն զիջել են ՀՆԱ աճի տեմպերին: Այս տարիներին ընդամենը պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը 15.8 տոկոսից աճել է 18.7 տոկոսի, ընդ որում, ինչպես նախորդ տարիներին, այս տարիներին եւս բյուջեի եկամուտների գերակշիռ մասն ապահովվել է հարկային եկամուտների հաշվին: Մասնավորապես, հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը 2004 թվականի 14.0 տոկոսից 2007 թվականին դարձել է 16.1 տոկոս: Այս տարիներին պետական բյուջեի ընդամենը ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը 17.5 տոկոսից հասել է 20.2 տոկոս: Նշված ժամանակահատվածում ծախսերի կառուցվածքում տեղի ունեցած հիմնական փոփո-

¹⁰ Ըստ ՀՀ ԿԲ-ի նախնական տվյալների:

խություններից, մասնավորապես, կարելի է նշել սոցիալական հատվածի ծախսերի կշռի ավելացումը: 2004-2007թթ զարգացումների արդյունքում զգալիորեն բարելավվել է բյուջեի հաշվեկշիռը՝ պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 1.7 տոկոսից իջնելով մինչև 1.5 տոկոս¹¹:

Հարկաբյուջետային ազդակի¹² միջոցով գնահատվող հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա 2004-2007 թվականներին ունեցել է հետևյալ պատկերը՝ 2004-2005 թվականին այն եղել է խթանող, 2006 թվականին՝ զսպող, իսկ 2007 թվականին՝ գրեթե չեզոք:

Գծապատկեր 2.5. Հայաստանի Հանրապետության հարկաբյուջետային ազդակը (2004-2008 թվականների փաստացի եւ 2008 թվականի սպասողական)



Ըստ ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծի ցուցանիշների հարկաբյուջետային ազդակը գնահատվել է 1.41: Նման ցուցանիշի պայմաններում պահանջարկը հարկաբյուջետային հատվածի կողմից ընդլայնվելու է 1.41 տոկոսով, իսկ ըստ ճշգրտված բյուջեի եւ սպասվող ՀՆԱ-ի հարկաբյուջետային ազդակի ցուցանիշը գնահատվել է 1.79, այսինքն պետական բյուջեի ներկայիս ծրագրի կատարման պայմաններում ամբողջական պահանջարկը հարկաբյուջետային հատվածի կողմից ընդլայնվելու է 1.79 տոկոսով:

Մակրոտնտեսական կանխատեսումներ

2008 թվականի առաջին յոթ ամիսների միտումները թույլ են տալիս ակնկալել տնտեսական աճի առնվազն 10.4 տոկոս մակարդակ՝ 5.6 տոկոս դեֆլյատորի պայմաններում, ըստ որի ՀՆԱ ճյուղային կառուցվածքում կպահպանվեն տարվա անցած ժամանակահատվածում գրանցված միտումները, եւ աճող պահանջարկի գործոններով պայմանավորված, կշարունակի առաջնորդող դեր ունենալ եւ տնտեսական աճի շարժիչ ուժը լինել տնտեսության ոչ արտահանելի հատվածը: Մասնավորապես, կապիտալ շինարարության եւ ծառայությունների ոլորտների հաշվին սպասվում

¹¹ Նշենք, սակայն, որ 2005 թվականին դեֆիցիտ / ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 1.9 տոկոս:
¹² Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա գնահատվում է հարկաբյուջետային ազդակի ցուցանիշով: Եթե հարկաբյուջետային ազդակը դրական է, ապա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ամբողջական պահանջարկի վրա կլինի խթանող, հակառակ դեպքում՝ զսպող: Իսկ եթե այդ ցուցանիշը գտնվում է (-0.2;+0.2) միջազայքում, ապա կարել է համարել, որ այդ ազդեցությունը չեզոք է:

է համապատասխանաբար 16.3 եւ 9 տոկոս աճի ցուցանիշներ, իսկ գյուղատնտեսության եւ արդյունաբերության ճյուղերում համապատասխանաբար 4 եւ 3 տոկոս աճեր:

2009 թվականին կշարունակվեն ՀՀ տնտեսության ներկայիս զարգացումներին բնորոշ (պահանջարկի աճով պայմանավորված) ՀՆԱ-ի աճի դրսեւորումները, սակայն աճի տեմպերի որոշակի դանդաղում կնկատվի, եւ 2009 թվականին տնտեսական աճը կանխատեսվում է շուրջ 9.2 տոկոս: Այս պարագայում տնտեսության ճյուղային կառուցվածքում շարունակելու են առաջնորդող տեղ գրադեցնել շինարարության եւ ծառայությունների ոլորտները, որոնց առաջարկի աճը հիմնականում արձագանքում է տնտեսությունում ձեւավորվող պահանջարկին, սակայն երկարաժամկետ հեռանկարում սահմանափակ է¹³:

Արտաքին հատվածի զարգացումները կրելու են հիմնականում ներքին տնտեսության զարգացումների եւ կառուցվածքային տեղաշարժերի, ինչպես նաեւ միջազգային տնտեսությանը ՀՀ տնտեսության ինտեգրման գործընթացի ազդեցությունը: Այս համատեքստում կանխատեսվում է, որ երկրի արտաքին բացվածությունը երկարաժամկետ հատվածում ունենալու է աճի միտում: Միեւնույն ժամանակ, առաջիկա 2-3 տարիներին ապրանքների եւ ծառայությունների հաշվեկշռի բացասական մնացորդը ՀՆԱ նկատմամբ, փոքր-ինչ կխորանա (2007 թվականի համեմատ մոտ 5 տոկոսային կետով) եւ կկազմի մոտ 25 տոկոս: Ապրանքների եւ ծառայությունների արտահանման աճը 2008 թվականին կանխատեսվում է մոտ 7.7 տոկոսի, 2009 թվականին՝ 12.7 տոկոսի չափով: Միջնաժամկետ հատվածում ներմուծման ծավալների աճը կպայմանավորվի, ինչպես համախառն տնօրինվող եկամուտների աճով, այնպես էլ՝ տեղական արտադրությունը կազմակերպելու համար հումքի ներկրման եւ օտարերկրյա ուղղակի ներդրումներով ֆինանսավորվող տեխնոլոգիաների ներմուծման անհրաժեշտությամբ: Մյուս կողմից, կնվազեն ներմուծվող ապրանքները տեղական արտադրության ապրանքներով փոխարինելու՝ նախորդ տարիներին նկատված տեմպերը՝ պայմանավորված ներմուծվող ապրանքների փոխարինման հնարավորությունների սահմանափակությամբ: Արդյունքում՝ 2008 թվականին ապրանքների եւ ծառայությունների ներմուծման տարեկան աճը կկազմի շուրջ 28.7 տոկոս, 2009 թվականին՝ 19.6 տոկոս:

Կանխատեսվում է, որ ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցությունը կունենա գրեթե նույն վարքագիծը, որը բնորոշ է լինելու ապրանքների եւ ծառայությունների հաշվեկշռի ցուցանիշին: Այն է՝ մինչեւ 2009 թվականը, 2007 թվականի համեմատ, ընթացիկ հաշվեկշռը փոքր-ինչ կվատթարանա՝ 2009 թվականին կազմելով ՀՆԱ 9.6 տոկոսը, այնուհետեւ, հաշվեկշռը կայունորեն կբարելավվի:

Վերջին տարիներին հարկաբյուջետային քաղաքականության վարքագիծը ընդհանուր առմամբ համահունչ է եղել մակրոտնտեսական զարգացումներին:

2008 թվականի վերջում սպասվում է, որ պետական բյուջեի ընդամենը եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը կկազմի 21.0 տոկոս, ընդ որում հարկային եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը՝ 17.0 տոկոս, իսկ ընդամենը ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը կկազմի 22.9 տոկոս: Արդյունքում 2008 թվականի պետական բյուջեի դեֆիցիտ/ՀՆԱ հարաբերակցությունը կլինի 1.9 տոկոս:

¹³ Շինարարության եւ ծառայությունների ոլորտների աճի վրա ազդեցություն ունեն նաեւ արտերկրից փոխանցվող դրամական միջոցները (մասնավոր տրանսֆերտները), որոնք ուղղակիորեն ազդում են պահանջարկի վրա:

2009 թվականի բյուջետային քաղաքականությունը միտված կլինի հարկային վարչարարության և կարգապահության բարելավմանը, կշարունակվի սոցիալական ոլորտ ուղղվող միջոցների ավելացումը: Վերջին տարիների հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ձեռքբերումներից է բյուջետավորման՝ հատկացվող ռեսուրսների օգտագործման մակարդակով ծրագրերի գնահատումից, ծրագրերի իրականացումից սպասվող արդյունքների գնահատման համակարգին անցնելու նպատակով ծրագրային բյուջետավորման տարրերի ներդրումը:

2009 թվականի համար հարկաբյուջետային քաղաքականության ազդակը 2008 թվականի ճշգրտված ծրագրի կատարման պայմաններում կանխատեսվում է -0.81 , որը վկայում է այն մասին, որ ամբողջական պահանջարկը հարկաբյուջետային հատվածի կողմից զսպվելու է 0.81 տոկոսով, իսկ 2010 թվականին հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ըստ ՄԺԾԾ-ի ծրագրի ամբողջական պահանջարկի վրա լինելու է գրեթե չեզոք և պետք է կազմի 0-ին մոտ ցուցանիշ:

Հարկաբյուջետային քաղաքականության գերակայությունները, որոնք ամրագրված են ռազմավարական փաստաթղթերով և Կառավարության գործունեության ծրագրով, նախանշել են նշված քաղաքականության իրականացման միջնաժամկետ հիմնական ուղղությունները: Մասնավորապես, հարկային քաղաքականության իրագործման արդյունքում ակնկալվում է՝

- հարկային եկամուտների առաջանցիկ աճ ՀՆԱ-ի աճի նկատմամբ՝ գլխավորապես ստվերային տնտեսության կրճատման հաշվին,

- հարկային վարչարարության կատարելագործում, պետական եկամուտների կոմիտեի և տնտեսավարող սուբյեկտների փոխհարաբերությունների որակական բարելավում,

- հարկային համակարգի շարունակական պարզեցում:

Միջնաժամկետ հատվածում պետական բյուջեի ծախսային և դեֆիցիտի կառավարման քաղաքականությունները կառուցված են լինելու հիմնականում հետեւյալ հարկաբյուջետային սկզբունքների վրա.

- պետական բյուջեի սոցիալականացման աստիճանի բարձրացում,
- ծախսերի գծով ապառքների կուտակման բացառում,
- դեֆիցիտի կայուն և ցածր մակարդակի պահպանում՝ պետական պարտքի բեռը չծանրացնելու նպատակով:

Աղյուսակ 2.2. Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ

Ցուցանիշը	2007	2008	2009
	փաստացի ¹⁴	ծրագիր ¹⁵	կանխատեսում
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	3148.7	3520	4169.3
ՀՆԱ-ի իրական աճ (%)	13.8	10.0	9.2
Անվանական ՀՆԱ (մլն ԱՄՆ դոլար)	9204.5	10825.4	13651
ՀՆԱ-ի դեֆլյատոր (%)	4.1	4.0	4.0
Գնաճ (Ժ-շրջ-ի վերջ) (%)	6.6	x	5.0
Գնաճ (12 ամսյա թիրախ,%)	x	4.0+/-1.5	4.0+/-1.5
ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար, միջին ¹⁶	342.08	325.16	302.44
ՀՀ դրամ/Եվրո, միջին	467.81	469.76	442.89
ՀՀ դրամ/Շվեյցարական ֆրանկ, միջին		280.60	275.47
ՀՀ դրամ/Ռուսական ռուբլի, միջին		x	12.26
Պետական բյուջեի ընդամենը եկամուտներ (մլրդ դրամ)	657.5	746.0	905.4
Պետական բյուջեի ընդամենը եկամուտներ/ՀՆԱ (%)	20.9	21.2	21.7
Պետական բյուջեի հարկային եկամուտներ եւ տուրքեր (մլրդ դրամ)	505.5	597.1	726.0
Պետական բյուջեի հարկային եկամուտներ եւ տուրքեր/ ՀՆԱ (%)	16.0	17.0	17.4
Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	88.5	104.9	128.4
Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ/ՀՆԱ	2.8%	2.9%	3.1%
Պետական բյուջեի ընդամենը ծախսեր (մլրդ դրամ)	678.4	822.0	945.4
Պետական բյուջեի ընդամենը ծախսեր/ ՀՆԱ (%)	21.5	23.3	22.7
Պետական բյուջեի դեֆիցիտ (մլրդ դրամ)	21.1	76.0	40.0
Պետական բյուջեի դեֆիցիտ/ ՀՆԱ (%)	0.6	2.1	1.0
Ապրանքային հաշվեկշիռ, (մլն ԱՄՆ դոլար)	-1600.3	-1210.0	-3,007.5
Ապրանքների ներմուծում, ՖՕԲ (մլն ԱՄՆ դոլար)	-2796.9	-2652.0	-4,363.3
Ներմուծում (ապրանքներ, ծառայություններ) / ՀՆԱ (%)	-39.0	-32.2	-40.5
Ապրանքների արտահանում, ՖՕԲ (մլն ԱՄՆ դոլար)	1196.6	1442.0	1,356
Արտահանում (ապրանքներ, ծառայություններ)/ ՀՆԱ (%)	19.3	19.1	15.8

¹⁴ Տվյալների համադրելիությունն ապահովելու նպատակով 2007թ բյուջեի ցուցանիշները բերված են 2008թ-ից հանրապետությունում ներդրվող ՊՖՎ (GFS) -2001 նոր դասակարգման համաձայն:

¹⁵ ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով հաստատված հարկաբյուջետային ցուցանիշներ եւ դրանց հաշվարկների հիմքում դրված մակրոտնտեսական ցուցանիշներ:

¹⁶ փոխարժեքներին վերաբերվող 2009թ ցուցանիշները հաշվարկային են՝ հիմք են ընդունվել 2008 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ շուկայում ձեւավորված միջին փոխարժեքները: Փոխարժեքներին վերաբերվող 2008, 2009թթ ցուցանիշները նշանակված են ՀՀ կառավարության արտադրության բյուջետային գործառնություններում ՀՀ կենտրոնական բանկի կողմից կիրառելու համար: